**Ծանուցում** **19.05.2020**

**ՉՄԷ3Է №6672, №6668 և ՉՄԷ3 №5420 ջերմաքարշերի հիմնանորոգման պայմանագիր կնքելու իրավունքի բաց մրցույթի անցկացման մասին**

**Ծածկագիր՝ ՀԿԵ-ԲՄ 020/016**

| կ/կ | Գնման գործընթացի չափանիշներ | Գնման պայմաններ |
|---|---|---|
| 1. | Գնման տարբերակ | Բաց մրցույթ |
| 2. | Գնման գործընթացի կազմակերպողի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն, էլեկտրոնային հասցեն, կոնտակտային հեռախոսահամար | Կազմակերպող՝ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Նյութատեխնոլոգիական ապահովման տնօրինություն (հետագայում՝ «ՀԿԵ» ՓԲԸ ՆՏԱՏ)<br>Գտնվելու վայրը՝ ք.Երևան, Արցախի պող., 32<br>Փոստային հասցե՝ 0005, ք.Երևան, Արցախի պող., 32<br>Էլեկտրոնային փոստ՝ tender@railway.am<br>Կոնտակտային հեռախոս՝ +374 (60) 46-31-74 |
| 3. | Գնման առարկան, մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքների, ծառայությունների ծավալը | ՉՄԷ3Է №6672, №6668 և ՉՄԷ3 №5420 ջերմաքարշերի հիմնանորոգում |
| 4. | Ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը և ժամկետները | Ծառայությունների մատուցման վայր՝ բաց մրցույթի հաղթող մասնակցի գործարանային տարածքը, վերանորոգման կայան |
| 5. | Պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գինը (լոտի գինը) կամ ապրանքի միավորի, աշխատանքի, ծառայության արժեքը | Պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գինը/ բազային վերանորոգման արժեքը/ առանց փոխադրման ծախսերի (3 միավորի չափով) ՉՄԷ3Է №6672, №6668 և ՉՄԷ3 №5420 դիզելային լոկոմոտիվների կցորդիչի հիմնանորոգման համար կազմում է 861 123/ութ հարյուր վաթսուն մեկ հազար հարյուր քսան երեք/ ԱՄՆ դոլար `առանց ԱԱՀ և 416 870 113 /չորս հարյուր տասնվեց միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար հարյուր տասներեք / ՀՀ դրամ առանց ԱԱՀ կամ 63 355 429 /վաթսուն երեք միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր քսանինը/ ռուբլի (փոխարժեքը 05/11/20. դոլարը՝ հայկական դրամով՝ 484.1; Ռուսաստանի Դաշնության ռուբլին՝ հայկական դրամով՝ 6.58): |
| 6. | Հայտի ապահովման չափը, ներկայացման կարգն ու ժամկետները | Հայտի ապահովում նախատեսված չէ |
| 7. | Գնման գործընթացի փաստաթղթերի տրամադրման ժամկետը, վայրը և կարգը, փաստաթղթերի տրամադրման համար վճարում կատարելու կարգը և ժամկետները | Փաստաթղթերը տրվում են ծանուցման հրապարակման օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում՝ մրցութային փաստաթղթերի տրամադրման հայտի հիման վրա՝ ՀՀ, Երևան, Արցախի, 32, ՆՏԱՏ վարչական շենք, 6-րդ սենյակ հասցեով: |

| | | |
|---|---|---|
| | | Մրցույթին որպես մասնակից գրանցվելու և անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ - գրավոր դիմում,<br>- կազմակերպության պետական ռեգիստրի պատճեն, - կոնտակտային տվյալներ (հեռախոս / ֆաքս), - վճարման հանձնարարագիր: |
| 8. | Տեղեկատվություն մրցակցային գնման մասին փաստաթղթերում շարադրված պահանջներին չհամապատասխանող մրցակցային հայտի մերժման մասին | Մասնակցին չի թույլատրվում մասնակցել բաց մրցույթին հետևյալ դեպքում.<br>1) չեն ներկայացվել մրցութային փաստաթղթերով սահմանված փաստաթղթերը և/կամ տրամադրվել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն մասնակցի կամ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների վերաբերյալ, որոնց գնումն իրականացվում է<br>2) մասնակիցը չի համապատասխանում մրցութային փաստաթղթերով նախատեսված պահանջներին<br>3) չի վճարվել մրցութային հայտի ապահովումը (եթե մրցութային փաստաթղթերով այն սահմանված է)<br>4) մրցութային հայտը չի համապատասխանում մրցութային փաստաթղթերի պահանջներին, այդ թվում եթե.<br>մրցութային հայտը չի համապատասխանում մրցութային փաստաթղթերով սահմանված ձևին, չի պարունակում փաստաթղթեր և այլ տեղեկատվություն համաձայն մրցութային փաստաթղթերի պահանջների<br>փաստաթղթերը պատշաճ կերպով ստորագրված չեն<br>պայմանագրի գնի (լոտի գնի) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի գնի վերաբերյալ առաջարկությունը գերազանցում է պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի սկզբնական (առավելագույն) գինը<br>մեկ մասնակցի կողմից հանդես եկող անձինք, տվել են այդ նույն գնմանը մասնակցության հայտն ինքնուրույն կամ ուրիշ մասնակցի կողմից<br>5) մասնակիցը հրաժարվում է մրցութային հայտի գործողության ժամկետը երկարաձգելուց և այն ապահովելուց: |
| 9. | Հայտերի ներկայացման կարգը, ժամկետի սկիզբը, ավարտը և մասնակցության հայտերի ներկայացման ժամը, հայտերի ներկայացման և գնման գործընթացի արդյունքների ամփոփման վայրը | Հայտերի ներկայացման մեկնարկը՝ 2020 թվականի մայիսի 19՝ ժամը 9:00-ից մինչև 18:00:<br>Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 2020 թվականի հունիսի 17ին՝ ժամը 9:00-ից մինչև 18:00 |
| 10. | Մասնակիցների դիմումների և առաջարկությունների քննարկման վայրն ու ամսաթիվը և գնման գործընթացի ամփոփումը | 0005, Երևան, Տիգրան Մեծի պող. 50, «ՀԿԵ» ՓԲԸ վարչական շենքի ստուդիա, հարկ 2, 203 սենյակ:<br>Հայտերի բացման ամսաթիվ՝ 19.06.2020թ. |

| | | |
|---|---|---|
| 11. | Գործընթացից հրաժարվելու իրավունքը | «ՀԿԵ» ՓԲԸ-ն իրավունք ունի չեղյալ համարել մրցակցային գնումը գնման մեկ և ավելի առարկայի (լոտի) մասով մինչև մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ամսաթիվը և ժամկետի ավարտի ժամը և հավակնորդներին մասնակցությանը թույլատրելու վերաբերյալ որոշումն ընդունելը, չկրելով ոչ մի պատասխանատվություն ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց առջև, որոնց այդպիսի գործողությունը կարող է վնասներ պատճառել, ինչպես նաև փոփոխել գնման գործընթացի անցկացման վերաբերյալ ծանուցումը հայտերի ներկայացման վերջնաժամկետից 5 օր առաջ: |
| 12. | Պայմանագրի կնքման ժամկետը | Գնման գործընթացի արդյունքներով կազմված մրցության հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության ստորագրման օրվանից հաջորդող 10 օրվանից ոչ շուտ և 20 օր ոչ ուշ |
| 13. | Պայմանագրի տևողությունը | Մեկ օրացուցային տարի, ևս 2 տարի երկարաձգման իրավունքով, պայմանով, որ յուրաքանչյուր մեկ օրացուցային տարվա համար ապրանքների մեկ միավորի գինը մնում է անփոփոխ |